ՏԵՂԵԿԱՆՔ

Վայք Խոշորացված համայնքում իրականացվող և իրականացվելիք ծրագրերի մասին, ինչպես նաև համայնքի առաջնահերթ լուծում պահանջվող խնդիրների վերաբերյալ

1. Սոցիալական Ներդրումների և Տարածքային Զարգացման Ծրագրի շրջանակներում/ֆինանսավորումը ԱՄՆ ՄԶԳ / ներկայացրել ենք հայտ-առաջարկ Վայք խոշորացված համայնքի տեխնիկական վերազինման, հանրային ծառայությունների որակի և տեսականու բարելավման, մատչելի գյուղատնտեսական ծառայությունների լիարժեք մատուցման վերաբերյալ, որը հաստատվել է և արդեն իսկ հայտարարվել է մրցույթ՝ ձեռք բերվող տեխնիկայի գնման նպատակով:/Ցանկը կցվում է /
2. <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում հունիս ամսից համայնքի տարածքում գտնվող Արին, Ազատեկ, Փոռ, Զեդեա գյուղերում նախատեսվում է կառուցել և խմոցներ, մակատեղեր և հովիվների կացարաններ:
3. ‘‘Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա’’/ՀՖՀԱ/ հիմնադրամի և Եվրամիության միջև 2014թ. դեկտեմբերի 18-ին կնքվել է դրամաշնորհային պայմանագիր, ըստ որի Վայք համայնքում իրականացվում է ‘‘Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում/ՎԱԷՀՔ/ ծրագիրը: Այն նախատեսում է Վայք համայնքում վերանորոգել թվով 12 բազմաբնակարան շենքերի տանիքներ, փոխել մուտքերի պատուհանները, ջերմամեկուսացնել մուտքերի դռները, տեղադրել արևային լուսատուներ մուտքերում և շենքերի ճակատային մասերում: Նշված շենքերը կառուցվել են անցյալ դարի 70-80-ական թվականներին, տանիքները գտնվում են անմխիթար վիճակում ուստի անհրաժեշտ է վերանորոգել, ջերմամեկուսացնել: Ծրագրի արժեքը կազմում է 600 000 եվրո, Վայքի համայնքապետարանի համաֆինանսավորումը կազմում է 145 125 եվրոին համարժեք դրամ: Համայնքը 2015 թվականին վճարել է 13.5 մլն. դրամ, ինչպես նաև 990 000 դրամ վճարել է շինվերանորոգման աշխատանքների նախագծերի և նախահաշիվների համար/որոնք պատվիրվել են քաղաքապետարանի կողմից/: Այժմ աշխատանքներն իրականացվում են 1-ին փուլում ընդգրկված 5 շենքերում, մասնավորապես արդեն փոխվել են տանիքները՝ ասբոշիֆերները փոխարինվել են թիթեղյա ծածկով: Նշված շենքերում բնակիչների հետ կնքվել է պայմանագրեր՝ շինարարության արժեքի 10 տոկոսի չափով բնակիչների կողմից համաֆինանսավորում կատարելու նպատակով:
   20.2 մլն դրամ կազմում է 2016թ.-ի համաֆինանսավորման չափը, 24,6 մլն. կազմում է 2017թ.-ի համաֆինանսավորման չափը:
   Համայնքապետարանն արդեն պատվիրել է ծրագրի 2-րդ փուլում ընդգրկված շենքերի շինվերանորոգման աշխատանքների նախագծային և նախահաշվային փաստաթղթերը:
4. Վայք քաղաքի Ջերմուկի խճուղու 2 կմ հատվածում անցկացվել է փողոցային լուսավորություն՝ համայնքային բյուջեի միջոցների հաշվին:
5. <<Քաղաքային կանաչ լուսավորություն>> ծրագրի շրջանակներում /ֆինանսավորումը UNDP/ նախատեսում ենք Վայք քաղաքի բոլոր լուսատուների փոխարինումը LED տիպի լուսատուներով:

6. Վերոհիշյալ 4 գյուղերում, կապված ոռոգման սեզոնի բացման հետ, արդեն իսկ մաքրվել և կարգի են բերվել ջրատար առուները և հանդամիջյան ճանապարհները:
7. Պետական բյուջեի միջոցներով արդեն իսկ վերանորոգված քաղաքային <<Արևիկ>> մարզադաշտը մայիսի 15-ի դրությամբ կկահավորվի գրասենյակային գույքով և սպորտինվենտարով /ֆինանսավորումը համայնքային բյուջեից/:
8. 3-րդ եռամսյակում նախատեսում ենք 4 գյուղերում կառուցել մանկական խաղահրապարակներ և լուծել արտաքին լուսավորության խնդիրը:
9. Ի կատարումն 20 ապրիլի 2017թ. ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ կապված <<Մաքուր Հայաստան>> ծրագրի հետ, ներկայումս համայնքի ողջ տարածքում ընթանում են ինտենսիվ սանիտարական մաքրման և համայնքային աղբավայրերի անձնագրավորման աշխատանքներ:
10. Մասնակցում ենք <<Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման>> եվրոպական միության ծրագրին, որի մեկնարկը տրվել է 28.04.2017թ.:

Ստորև ներկայացնում ենք համայնքի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները.

1. Փոռ և Արին գյուղերի խմելու ջրի ներքին ցանցերի և մայր ջրատարների վերանորոգում:
2. Արին և Ջեդեա գյուղերը Վայք քաղաքի հետ կապող ճանապարհների հիմնանորոգում:
3. Վայք քաղաքի բնակ. շենքերի բակային տարածքների, Արշ. Մելիքյան և Իսրայել Օրու փողոցների ասֆալտապատում
4. Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության ժամանակ առաջանում է համաֆինանսավորման խնդիր, որի բացակայությունը շատ հաճախ խոչընդոտում է դրանց հետ լուրջ ծրագրեր իրականացնելուն

# Խոշորացված համայնքի կարիքների համար ձեռք բերվող տեխնիկաների ցանկ

| ՀՀ | Ծախսի անվանումը | Ծավալը | Չ/Մ | Համայնքի ներդրում | ՀՏԶՀ | Արժեքը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| | **Բաղադրիչ 1** | | | | | |
| | Բաղադրիչ 1 | | | | | |
| 1. | Էքսկավատոր Terex TLB825 | 1 | Հատ | | 37000000 | 37000000 |
| 2. | Բեռնատար ինքնաթափ մեքենա ՄԱԶ տիպի, 20տոննա | 1 | Հատ | | 20000000 | 20000000 |
| 3. | Բազմաֆունկցիոնալ կոմունալ և ձյուն մաքրող մեքենա ԿԱՄԱԶ | 1 | Հատ | | 25000000 | 25000000 |
| 4. | Աղբատար մեքենա ԿԱՄԱԶ տիպի, 8խմ, կողային բարձիչով | 1 | Հատ | | 21000000 | 21000000 |
| 5. | Աղբամաններ | 100 | Հատ | | 6000000 | 6000000 |
| 6. | Ավտոկռունկ, ՄԱԶ-ի բազայի վրա, 25 տոննա, 27մ КС55727 | 1 | Հատ | | 33000000 | 33000000 |
| 7. | Տրակտոր МТЗ-1221.4 առջևի ձնագութանի թևով | 2 | Հատ | | 31400000 | 31400000 |
| 8. | Ավոկայանատեղի | 1 | Հատ | | | |
| 9. | Եռակցող ագրեգատ ADD-4004 2ելքով | 1 | Հատ | | 2500000 | 2500000 |
| | Ընդամենը բաղադրիչ **1** | | | 6100000 | 175900000 | 175900000 |
| | Բաղադրիչ **2** | | | | | |
| 1 | Միկրոավտոբուսների ձեռքբերում, որոնցից երկուսը 4x4 | 3 | Հատ | | 40000000 | 40000000 |
| 2 | Ավտոկանգառներ | 4 | Հատ | | 12000000 | 12000000 |
| | Ընդամենը բաղադրիչ **2** | | | 1800000 | 52000000 | 52000000 |
| | Բաղադրիչ **3** | | | | | |
| 1 | Մոտոբլոկ-խոտհնձիչ | 1 | հատ | | 2 000 000 | 2 000.000 |
| 2 | Առու հանող կցորդ | 1 | հատ | | 500 000 | 500.000 |
| 3 | Սրսկիչ մեքենա կախովի AGP-330 | 1 | հատ | | 1700000 | 1700000 |
| 4 | Տրակտոր Բելոռուս ՄՏԶ-82 տիպի | 2 | հատ | | 17000000 | 17000000 |
| 5 | Գութան ПЛН-4-35П-2 | 1 | հատ | | 1000000 | 1000000 |
| 6 | Գութան ПЛН-3-35П | 1 | հատ | | 850000 | 850000 |
| 7 | Խոտհնձիչ կախովի | 1 | հատ | | 750000 | 750000 |
| 8 | Կուլտիվատոր КПГ-4 | 1 | հատ | | 600000 | 600000 |
| 9 | Խոտի մամլիչ /պռես, տոկավո/ | 1 | հատ | | 6000000 | 6000000 |
| | Ընդամենը բաղադրիչ 3 | | | 1200000 | 30400000 | 30400000 |
| | ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԴՐՈՒՄ | | | 10000000 | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | **258300000** | **258300000** |

Ծրագիրը հիմնում է 14 նոր ծառայություն, բացում է 18 նոր աշխատատեղ, համայնքի բյուջեից սուբսիդավորվում է շուրջ 5886000, որից 2400000 դրամը ուղղվում է բազմաֆունկցիոնալ կոմունալ ավտոմեքենայի շահագործմանը: